

ՏՆՆԻՆԻՆԻ

ՐԵՍՄԻ

Առհասարակ էմպաթիա թարափընտան քոնթրաթոնա րապիթ իտիմեքսիդին...

(Մասնավորապես տեղեկություններ և հարցեր ընդհանուր թվերի վերաբերյալ)

Կապալա գաղափարներ քննարկելու նպատակով հանդիպումներ կանգնեցվեն...

(Խորհրդակցություններ հանդիպումների ժամանակ)

Շեհեր հալին Գ ու թարիխի ինչ Պապը Ալի ճանիպի սամիսինտեն իթապուրուլան...

Թեթապիթի մեղքերունին թեմամի ինչ վե խախտանե ինքնաբերական լազըմ...

(Մասնավորապես տեղեկություններ և հարցեր ընդհանուր թվերի վերաբերյալ)

Պապը Ալի Պանդը (Սամանինին րէս-մէն ագտ օրուան մուգապէլաթ մուս-ճիպինճէ հայիզ օլտուղու հուգուգ ու...

Սալթանաթը սենյակէ Տերիսաատէթ-տէ Պանդը (Սամանինին մուգապէլաթ ի-լէ պէրապէր նեղարեթի թահթընտա...

Պիր տէ Մալիկէ նեղարեթի ինչ պիլ իթթիթազ, իլանաթը րէսմիլէ մուս-ճիպինճէ կէրէք տեհուն խորհրդին...

Էն վե կէրէք նըսթը տիկերի ինչ վե-րիլէճէք սենյատաթըն քեղալիք նագ-տեն թեթտիկէ օլունաճագ կիւղէթէ...

Մուսալթը մէշուրէն պաշտա միւսթէքրիթաթ խորհրդին վե տա-խիլիկէնին ֆայիզ վե րէսմիլէթին...

Իշիթ տիկիմիդէ կէրէք տիւնքի կիւն Ագաթայի եղբորնտա, թըրամ վայ արապաթը եօգուչտան աշաղ ին...

ՍՈՆ ՀԱՎԱՏԻՍԼԵՐ

ՍԵՐՊԵՍԹԱՆ

Պիւլիքատ, 13 հոկտ.

Միլիթի նիգամիսմէնին թատիլին տայիլ Բարաթ ինչին ինքնաթիռ օրուանու...

ԹԻՆՆԻՆԻՆԻ

Իլիլիքուլ, 16 հոկտ.

Միտ. Ն. Որ. բամբուլ 7 5/8 Տօլար Էյի ճինս 4 3/4 Պու կիւնքի սաթը 12,000 Ինպսա գալի

ՍԱՐԿԱՅԻ

Լօնտրա, 16 հոկտ.

Էսամը Ուսուլի աշխատ. գ. 27 5/8 7/8 Գարաթաթ գ. 28 65 34 1/4 1/2 69 33 3/4 3/4 1873 94 1/4 3/8 Ինչիլիզ օլունաթիլի

ԳՐԱՐԱԹԱ ԲԻԱՋԱՍԸ

Table with 2 columns: Book title/author and Price. Includes entries like 'Էս. Ուս. 4 հոկտ. աշխատ. գարաթաթ 34 2'.

ԱՐՄԻՍԵՆԱԹԱՅԻ

Table with 2 columns: Book title/author and Price. Includes entries like 'Բրեյտի Ժենեթալ 6 0/0 Լիթ. Օսմ. 5 35'.

ԱԳՃԵԼԵՐԻՆ ԲԻԱՋԱՍԸ

Table with 2 columns: Book title/author and Price. Includes entries like 'Ինչիլիզ Լիթատը 109 25'.

ԵՐԳԱՅԻՆ

ԱԳԱՊԵԱՆ ՎԱՐՁԱՐԱՆ

Մանդուլմէնին 2937 ինչի նիստէսինտէն պաղըրյէ :

Նաալըքի իլան իթմիլ իտիք, կէրէք, մէքթիթիթաթէն էօյլէ պիլ ուղագ-եօլունուղա չըգան վե ճէտարէթ իտէն...

Մեղքիւր միւղիդա զիյնէթինէ թամ սաաթ ալթըտա, այրըլըք իւղերինէ խաաթէթէն...

Հովհաննէսը զայն ամէն գաւառներու մէջ
գործադրել տալ ուղեւորը «Սահմա-
նադրութեան» 99-րդ, յօդուածին հա-
մեմատ օրինադրանց կը հանդիսանայ
և երբ այս օրինադրանքով իրաւունք կը տայ
օրինաւորներուն նախ կեդրոնական
ընդհանուր ժողովին, և ապա խորհ-
րադպէսը դուռն դիմելու որպէս զի օ-
րինադրանք հանգանդաւոր հրա-
ման տրուի իրեն :

Իզմիրի Հայոց ողջամիտ և լուսա-
ւորեալ մարդ քաջ կը ճանչէր իր այս
իրաւունքը, բայց յարմար չ'զատած
էր բողոքելու քանի որ տակաւին չէր
տեսած Հրահանգին գործադրութե-
ան հետեւող վնասակար արդիւնքը :
Սակայն այս իրաւունքը ի գործ դնե-
լու այսինքն հրահանգին դէմ բողո-
քելու համար ընդհանուր ժողովին
նաև բարձրագոյն Դրան դիմելու և
ընկ մեր ազգային օրինադրին գործադ-
րութեանը պահանջելու ժամը հասած
է ալ :

Ըսենք թէ ինչպէս և ինչ պատճա-
ռաւ հասած է այս ժամը :

Իզմիրի նախորդ երեսփոխանական
ժողովն Եգիպտոսին օրովը լուծուելէն
ետք միայն քաղաքական ժողովը մնա-
ցած էր : Ինքզինքը քաղաքին Հայ
հասարակութեան նախախնամութիւնը
սեպարատայն անյադ ժողովն Ուսումնա-
կան և Տնտեսական խորհուրդներու
պարտականութիւններն ալ իր վրայ
առած չորս տարիէ ՚ի վեր պաշտօն կը
վարէր : Եգիպտոսի խնդիրը խառնելով
և բարեմիտ ժողովրդեան մէկ մասը
գրգռելով որպէս զի կուրս ու անմիա-
բանութիւնը շարունակուի, և ինքն
այս կուրսին և անմիաբանութեան շը-
նորհիւ պաշտօնէն չ'ընկնի, վասն զի
եթէ կուրս վերնար, հետեւութիւնը
պիտի ըլլար գաւառական ընդհանուր
ժողովի մը կազմութիւնն և նոր քա-
ղաքական ժողովի մ'ընտրութիւնը :

Պատրիարքարանի թուրքեանքը
կամ մեղսակցութեամբն իրերու այս
վիճակը շարունակուեցաւ մինչև ար-
ժանապատիւ Սրբաձառեան :

Վարդապետին հո-
խաբար :

Իսրայէլի ընտրողական ժո-
ղովի մը :

Սակայն քաղաքական ժողովը, որու
միայն երկու անդամները մնացած և
միւսները հրաժարած էին, Եգիպտո-
սի կուսակցութեան քանի մը շլամիտ
պարագայի խնդրուն իր հիւսիս գործին
շարժելով, և՛ նկատելով թէ Դարեգին
վարդապետի նախագահութեամբ կա-
տարուած ընտրութիւններէն կրնար խը-
րիման սրբազան իզմիրի առաջնորդ
ընտրելու զոր գաւառական ժողով մ'ար-
տադրուի, մինչդեռ Հայրիկին Պաշա-
բնակ չ'անմիտներուն հետ բանակցող ու-
մանց թագուն նպատակն էր Եգիպտո-
սը իզմիրի առաջնորդ ընտրել անոր
ասկէջ արտաքսուելուն վրէժը լուծե-
լու համար, լոկ երկու անձէ բաղկացեալ
քաղաքական ժողովը, կ'ըսեմ, սուտ
ու մուտ միջոցներով և նենգուպա-
տիք թելադրութիւններով յաղորդեալ
Գարեգին վարդապետը հրաժարեցնե-
լու և տեղը կարգ ել տալու Արժ. Տէր Գե-
որգ քահանան, որ բարեմիտ սյ ծեր,
անուս և տարիէ մ'ի վեր հիւանդ է :
Այս քանով գոհ չ'եղաւ, և ահա ընտ-
րեց, «Դիտէ որ ընտրողներն երկու
անձինք են», ընտրողական ժողով մը
որու անդամներն բացի մէկէն կամ
երկուքէն միամտաբար հոգի կը տա-
լին Եգիպտոսին վրայ . . . :

Կազմուեցաւ ընտրողական ժողովը,
և սկսաւ գործել կարծեցեալ քաղա-

կան ժողովին հետ : Իր առջի նստին
մէջ ամենէն առաջ ընտրողութեան իրա-
ւունքի իր հիմնաւորած տուրքի քա-
նակութեան խնդիրը յուղուեցաւ : Ընտ-
րողական ժողովը իր մէկ անդամէն ՚ի
զատ որ է Չ . . . կռիւնով Հրահան-
գին 6րդ յօդուածին և Պատրիարք-հրա-
մանին վրայ ուղեց ընտրողութեան ի-
րաւունք տալ ամեն կարգի և որ և իցե
տուրք վճարող անձանց «մերժելով» և
չէ թէ «օրինաւորապէս հերքելով» 2-ի
առաւելութիւնները, որք էին. թէ ինք
հրահանգը կեդրոնական ընդհանուր ժո-
ղովէն ընդունուած և Բ. Դրեն վա-
ւերուած չ'ըլլալուն համար չէր կրնար
անոր 6րդ յօդուածը ընդունիլ և ճան-
չել իր օրէնք, քանի որ Սահմանա-
դրութեան 66րդ և 98րդ յօդուածնե-
րուն հակառակ կամ անորոշ տրամա-
դրութիւններ կը պարունակէ . թէ
քանի սը ընտրողութեան իրաւանց հիմ-
նաւորած ազգային տուրքի նուազա-
գոյն քանակութիւնը 75 դր է, պէտք
է ազգային տուրք չ'հաստատուած գա-
ւառներու մէջ Տէրութեան տուրք վճա-
րողներու երրորդ դասը համարել այն
անձներ որք առ նուազ 75 դր Տէրու-
թեան տուրք կը տան. թէ ընտրողա-
կան ժողովն ազգային օրինադրին այս
տրամադրութեան հակառակ և «ան-
վաւեր հրահանգի» մը համեմատ վար-
ուելով ընտրողութեանց դէմ բողոքե-
լու իրաւունք կը տար այն անձերու
որք հրահանգը չ'էին ճանչիր, և ընդու-
նել իր օրինադրի : Սակայն ժողովին
մեծամասնութիւնը նկատողութեան
չ'առաւ այս օրինաւոր առաւելութիւն-
ները, ընտրողաց և ընտրելեաց քմա-
ծին ցանկեր պատրաստեց, ապօրինա-
ւորութեան և զեղծումի դուռ բացաւ,
հանգարտած կուսակցութեան ոչին
գրգռեց, և նաև իր ընդունած ան-
վաւեր հրահանգին հակառակ՝ քուէ-
արկութիւն և քուէհամար ընել տալով
ճշմարիտ օրինաւորներու դժգոհ-
թեան տեղի տուաւ :

Թէ ինչ-
ի-

Ապօրինաւորութիւններ,
արդարութիւններ և զեղծումներ ե-
ղան այս յուշերկութեան մէջ, նաև
անվաւեր հրահանգին տրամադրու-
թեանց հակառակ, ուղղութիւնայ հաս-
կեցաւ «Արեւելեան Մամուլ» մէջ հրա-
տարակուսած անկողմնակալ յօդուածէն
և իրիման Հայրիկը իզմիրի առաջ-
նորդ ընտրելու զոր կուսակցութեան
բողոքագրէն՝ որ պատրիարքարանը
ընկուեցաւ և Մանգուլի մէջ հրատա-
րակուեցաւ : Ըստ իս թէ և ընտրողու-
թեան իրաւունք պէտք է ձրի և ընդ-
հանուր ըլլայ, բայց այսպիսի անսահ-
ման իրաւունք մը լոկ լուսաւոր ժողո-
վորդներու կրնայ տրուիլ : Չ'կայ դէնք
մ'որ այնքան ահարկու և վտանգաւոր
ըլլայ որքան է քուէն անուս և անմը-
տի մը ձեռքը :

Ընտրողական ժողովը չ'նկատեց այս
կէտը, քուէարկութեան իրաւունք
տուաւ այնպիսի անձերու որք ըստ օ-
րինի չ'ունէին այս իրաւունքը, և որք
կրնային խաբուել և Եգիպտոսական թա-
գուն նպատակին ծառայել իրենց
քուէն չ'արաւար գործածելով :

Հակեդեան կուսակցութիւնը
քուէհամարէն ետք լսելով և ստուգե-
լով գործուած ապօրինաւորութիւննե-
րը, և մանաւանդ դիտելով թէ «հրա-
հանգին» չ'որհիւ իրցել էին տեղի ու-
նենալ անոնք, փութաց բողոք մը մա-
տուցանելու ընտրողական ժողովին որ
նկատողութեան չ'առաւ զայն, ուրիշ
բողոք մ'ալ պատրիարքարանը զրկեց
խնդրելով որ ժամ առաջ քննիչ մը

ընկուի հոս նախ «ըստ հրահանգի» թէ
ընտրողական ժողովին և թէ՛ քուէ-
արկութեան կողմէն եղած ապօրինաւո-
րութիւնները քննելու և նոր ընտրու-
թեան ձեռնարկելու, չէ թէ «հրահան-
գին», այլ «Սահմանադրութեան» մէջ
նշանակուած օրինական տրամադրու-
թեանց համեմատ : Սակայն Եգիպտոսա-
կան ազգային վարչութիւնը՝ այս տե-
ղի «երկու անձէ բաղկացող» և առ-
ժամանակեայ կերպով յանձնաժողովի
պաշտօն վարող ինքնակոչ քաղաքական
ժողովին հետ իր մեղսակցութիւնը, և
Իզմիրի պատուաւոր վաճառականնե-
րէն, սեղանաւորներէն, տէրութեան
ժողովի անդամներէն, ուսումնական-
ներէն, բանիբուն արհեստաւորներէն
բաղկացեալ հակեդեան կուսակցու-
թեան դէմ իր հակադրութիւնը... ցոյց
տալու համար՝ ամիսի մը չափ ասոնց
բողոքագրերուն վրայ լուրէն ետք հը-
րաման կը տայ այս տեղի Տէր Գեորգ
քահանային ի նիստ հրաւիրելու «նոր-
ընտիր գաւառական ընդհանուր ժո-
ղով» որպէսզի «իդ զիւանը կազմէ» և
«ընտրութեան տեղեկագիրը պատրաս-
տէ» և Պօլիս զրկէ, միւս կողմէն ղըր-
կուած «բողոքագրերուն հետ բաղ-
դատուելու» և խնդիրը լուծելու հա-
մար :

Ամենապատիւ Ներսէս սրբազանը իր
սեպտ. 3 թուականով և 313 թուով
գրած նամակովն այս հրամանը տալէն
ետք, նաև խնդրագիր մը կը գրէ՝ Այ-
տընի նահանգին ընդհանուր կառա-
վարութեան որպէս զի չ'արգիլէ Հայոց
գաւառական ընդհանուր ժողովին գու-
մարութիւնը :

Ինքնակոչ քաղաքական ժողովն այս
երկու նամակը օրերով իր գրպանին
մէջ կը պահէ, գաւառական ընդհա-
նուր ժողովին վաւեր-
տարածայնէ
ամենուրեք, որպէս զի
մի-

առքերն աւելի գրգռուին և նորա-
նոր խլրտուումներ չ'որհիւ իր ծրկա-
պետութիւնը շարունակէ տեղական կա-
ռավարութեան եկած պաշտօնական
հրամանի մը համեմատ յիսունի չափ
պատուաւոր անձերը սեպտեմբերի 9-ին
Տէր Գեորգին կնքովը կնքուած հը-
րաւիրագրով մ'ազգային առաջ որ-
դարանը կը հրաւիրէ առ ժամանակեայ
յանձնաժողով մ'ընտրելու համար, ո-
րու պաշտօնը պիտի ըլլայ՝ պէտէլէն
արոց հաւաքման և հաշիւներու կար-
գադրութեան պարտաւի, բայց ճիշտ
այս յիսունի չափ անձերու գումար-
ման միջոցին յանկարծ կ'ուշաբերի,
կ'սթալի, կը մտածէ թէ ազգային
կնիքը յանձնաժողովին յանձնելու և
իր հաշիւները անոր տալու պարտա-
ւոր է, կը խորհի թէ այս պարտաւո-
րութեան կատարուիլ / և հնչումայ
իշխանութեան վերջ տալ է, և ահա
կը փութայ միամիտ քահանայի մը հետ
տեղական կառավարութեան դիմելու
և Ներսէս սրբազանին յանձնարարա-
կան նամակը մատուցանելու, և կը յա-
մուրի Բայսէլի Ահմէտ բաշան խաբե-
լու հատուցանելով թէ սրբազան Պատ-
րիարքին հրամանաւ ընդհանուր ժո-
ղով պիտի գումարուի, և թէ այս ժո-
ղովը արտօնութիւն ունի այն յանձ-
նաժողովը . որու իմացիք քաղաքա-
կան ժողովը, կազմելու :

Առժամանակեայ յանձնաժողով մը
կարգելու համար առաջնորդարան հը-
րաւիրուող յիսուն անձանց խիստ մե-
ծագոյն մասն իրաւամբ կը դժգոհի .
այս գաղտնի մեքենայութիւններէն,
և բոլոր իզմիրի Հայերը բողոքովն կը
գրգռուին և կը զայրանան երբ մա-

նաւանդ կը լսեն թէ ինքնակոչ քաղա-
քական ժողովը կառավարութեան
տասնի չափ զապիլիէ ուղեր է ուրբաթ
օր գումարուելու գաւառական ընդ-
հանուր ժողովը հակեդեան կուսակ-
ցութեան դէմ պաշտպանելու հա-
մար :

Բայց այս կուսակցութիւնը՝ նկատե-
լով թէ «ըստ հրահանգի միայն» հրա-
ման տրուած է գաւառական ընդհա-
նուր ժողովին նիստ ընելու որպէս զի
իր դիւանը կազմէ և ընտրութեանց
տեղեկագիրը չ'ենէ . նկատելով թէ
հրահանգն անվաւեր տետր մ'է և չէ
թէ ազգին և տէրութեան կողմէն ըն-
դունուած և հաստատուած օրինագիր
մը . նկատելով թէ «Սահմանադրու-
թեան» 81-րդ յօդուածը ընտրութեանց
տեղեկագիր չ'իշխու արտօնութիւնը՝
չէ թէ ընդհանուր ժողովին այլ թա-
ղական խորհուրդին, այսինքն ընտրո-
ղական ժողովին տուած է . նկատելով
որ եթէ գաւառական ընդհանուր ժո-
ղովն այս արտօնութիւնն ունենար ան-
գամ, այս անգամ չ'էր կրնար վայելել
զայն քանի որ իր անդամներէն չ'առնե-
րը ընտրութեանց մէջ եղած ապօրի-
նաւորութեանց և չեղձմաներուն
հեղինակներն են, և քանի որ հե-
տեւաբար չէր կրնար ամբաստու-
նեալ ու «ընտրաման» գաւառաւոր ըլ-
լալ՝ պաշտօնական տեղեկագիր մը .
բնականապէս ինքզինքը արդարացնե-
լով (1), վերջապէս «Ենթադրելով» ան-
գամ թէ գաւառական ընդհանուր ժո-
ղովն իրաւունք ունենար նիստ ընելու,
գարծեալ իրաւունք չ'ունէր քաղա-
քական ժողով կամ յանձնաժողով
կազմելու առ այժմ, ազգային առաջ-
նորդարանը դնաց, ուղեց ներկայ
գտնուող գաւառական ժողովին նստին,
բացատրութիւն ուղեւ այս ամեն կէ-
տելուն նկատմամբ, և երբ տեսաւ թէ
ինքնակոչ գաւառական ժողովն «ե-
լանակ նիստ ընելու և բացատրու-
թիւն տալու» ամօթ ահար կ'ըլլար
օրինաւորութեան առջև, և խոյս կը
տայ, և երբ չ'իտեց թէ ալ ազգային
օրինաւոր «իշխ» Ենթութիւն մը չ'կայ ա-
ռաջնորդարանին մէջ, իր անվտանգու-
թիւնը և ինքնակոչ քաղաքական ժո-
ղովին՝ դէմ ունեցած անհաստատու-
թեան կասկածները աւելի զգալի
գերպով յայտնելու համար դիւանա-
տան գրեթէ բոլոր տետրերը կ'առնու-
մեծագոյն Պաշադարեան էֆէնտի-
ին պաշտպանութեան ներքե կը դնէ,
և հիմայ կ'ապասէ . . . որ կեդրոնական
վարչութիւնն իրերու այս ձախող վի-
ճակի մը վերջ մը տայ նախ ազգային ա-
ռաջնորդարանը մաքրելով որ Օսթիանի
ախոռներուն նմանելու մօտ է, և երկ-
րորդ քննիչ մը զրկէ ընտրողական ժո-
ղովին կողմէն չ'իշխուելի տեղեկագի-
րը և միւս կուսակցութեան բողոքա-
գիրները նկատողութեան առնելու,
ճշմարտութիւնը երևան հանելու և
լոկ սահմանադրութիւն ըսուած ազ-
գային կանոնագրութեան համեմատ
Իզմիրի մէջ վարչութեան մը կազմու-
թեան հսկելու համար :

ՊԵՐՃ

(1) Ընտրողական ժողովին մեծագոյն մա-
սը այսինքն հինգ անդամն ալ երեսփոխան
ընտրուած են :